ՀՀ Արմավիրի մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդ ստեղծելու վերաբերյալ

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2014 թվականի փետրվարի 10 - ի N 85 - Ա որոշման, որով նախատեսվում է ստեղծել ՀՀ մարզպետներին առընթեր երիտասարդական խորհուրդներ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր, Էջմիածին, Մեծամոր քաղաքային և Մրգաշատ, Նալբանդյան, Սարդարապատ, Արշալույս, Փարաքար, Դալարիկ, Մյասնիկյան, Քարակերտ գյուղական համայնքների կողմից վերը նշված որոշմամբ հաստատված կանոնադրությամբ սահմանված կարգով հայտարարվել է մրցույթ՝ ոչ պետական հատվածը ներկայացնող ներկայացուցչի ընտրության համար: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև սույն թվականի մարտի 10-ը դիմել նշված համայնքների աշխատակազմերին:

Խորհրդի կազմում ընդգրկվում են տվյալ մարզի բոլոր քաղաքային, ինչպես նաև 3500 և ավելի բնակիչ ունեցող համայնքների երկուական ներկայացուցիչ, որոնցից մեկը ներկայացնում է պետական, իսկ մյուսը՝ ոչ պետական հատվածը:

- Խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամի մրցույթին կարող են մասնակցել 16-30 տարեկան այն երիտասարդները, ովքեր համապատասխանում են հետևյալ չափանիշներին՝

  1) երիտասարդներին առնչվող կրթական, սոցիալական, զբաղվածության, առողջապահական և մշակութային խնդիրներին տիրապետելը.

  2) երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերին կամ միջոցառումներին մասնակցության փորձ.

  3) երիտասարդական քաղաքականության բնագավառում միջազգային փորձի, պետական և հանրային կառավարման համակարգի, ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման առանձնահատկությունների իմացություն:

- Հավասար պայմանների դեպքում որպես առավելություն են դիտվում երիտասարդական քաղաքականության բնագավառում իրականացված փորձագիտական աշխատանքները կամ հրապարակումները, ոչ ֆորմալ կրթության ոլորտի գիտելիքները և գործնական աշխատանքի փորձը: